


ՀԱՅ ՄԱՐԴՈՒԻՎՈՒՆԻՅԵԼ Ո՞ՒՐ Է

Posted on December 15, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



Պարոյր Աղապաշեան, Պէյրուք, 15 Դեկտեմբեր 2010

Կայ Թէ՞ Չկայ, Պէտք Է Թէ՞ Ոչ



Մարդո՛ւժ:

Ահաւասիկ շատ ընդհանրական հասկացողութեամբ, բայց խիստ *մասնաւորական* իմաստաւորումով բառակապակցութիւն մը, որուն մէջ ներպարփակուած է ամբողջ իրականութիւն մը, որ կը վերաբերի այսօրուան, վաղուան հաշւոյն:

Պարոյր Աղապաշեան, Պէյրուք, 15 Դեկտեմբեր 2010

Կայ Թէ՞ Չկայ, Պէտք Է Թէ՞ Ոչ



Մարդո՛ւժ:

Ահաւասիկ շատ ընդհանրական հասկացողութեամբ, բայց խիստ *մասնաւորական* իմաստաւորումով բառակապակցութիւն մը, որուն մէջ ներպարփակուած է ամբողջ իրականութիւն մը, որ կը վերաբերի այսօրուան, վաղուան հաշւոյն:

Այս օրերուն, որքա՛ն կը խօսուի մարդու լի կարեւորութեան եւ անհրաժեշտութեան, աշխատունակութեան եւ ադրիւնաւետութեան, մեր պարագային, *հայ մարդու լի, հայ մտաւորական մարդու լի* մասին:

Շատեր խիստ լրջութեամբ կը մօտենան հայ հարցին, ուրիշներ՝ թեթեւամտութեամբ, ոմանք ալ՝ անտարբերութեամբ, սակայն, ինչո՞ւ այս հեռաւորութիւնները, անյարիրութիւնները կամ հակասութիւնները:

Պատասխանները կրնան ըլլալ այլատեսակ կամ բազմաբնոյթ, սակայն իրենց հրատապութենէն ոչինչ կը կորսնցնեն, այնքան ատեն որ հայ մտաւորական մարդու լի կենսունակութիւնն ու նպատակասլացութիւնը, հայ իրականութեան կու տան վերանորոգութեան ու բարեկարգութեան լիցք ու մղում, միանգամա՛յն:

Պէտք է ըլլալ արդար եւ առարկայական:

Այսօր հայ մտաւորական մարդու լի, չափազանցած չենք ըլլար, *զգալի նուազում կամ անկում կայ*, բոլոր մարգերէն ու կալուածներէն ներս, որ կրնայ ըլլալ ենթակայական, պարագայական, պարտադրական եւ, ինչո՞ւ ոչ, կամայական:

Նախ՝ յստակացնե՛նք:

Ո՞ր չկայ մտաւորական մարդու լի տագնապ:

Ստեղծագործողներո՞ւ մօտ:

Մանկավարժներո՞ւ մօտ:

Ազգային գործիչներո՞ւ մօտ:
Մամուլի ծառայողներո՞ւ մօտ:
Կազմակերպութիւններո՞ւ մօտ:
Արուեստի մասնագետներո՞ւ մօտ:

Այս բնագաւառներէն ներս (նաեւ այլ եւ յարակից) կա՛յ մարդուծի *մտահոգիչ* պարագութիւն մը, ոչ թէ անոր համար, որ չկան կամ չունինք այդ ասպարեզներէն ներս մասնագետ, արհեստավարժ ու կարող ուժեր, այլ՝ մե՛նձ ԲԱՑԱԿԱՆԵՐ, ինչպէս՝

- Հովանաւորութիւն (տուեալ միաւորին)
- Հոգատարութիւն (պատկան կազմակերպութեան)
- Պաշտօնակոչութիւն (յարմարագոյն թեկնածուին)
- Վարձատրութիւն (գոհացուցիչ ընտրանքին)
- Անաչառութիւն (զօրակցելու լաւագոյնին)
- Պատրաստութիւն (հերթափոխի սերունդին)

Եթէ այս թուարկումները կ'ընդգծուին վերոյիշեալ բաժանումներով ու *պայմանական* են, պարզապէս անոր համար, որ հայ իրականութեան մէջ, *երիտասարդ մարդուծը* ինչպէ՞ս պիտի պատրաստուի, ո՞ր պիտի գործէ եւ ի՞նչ արդիւնաւետութեամբ:
Անգամի մը համար, պետք է նայիլ մեր չորսդին, հոս կամ հոն, նոր սերունդին, համալսարանաւարտ սերունդին, ի՞նչ օրինակ կը մատուցուի անոր, ի՞նչ երաշխիք կը տրուի, ի՞նչ ապագայ կը խոստացուի, որ ան հրապուրուի հայ ազգային կեանքին մէջ ներդրուելէ, նետուելէ ու ... ներխուժուելէ:

Ո՞ր եւ ինչպէ՞ս կը պատրաստուին հայ մարդուծի նուիրեալները, իրենց մասնագիտութեամբ, արհեստավարժութեամբ ու կարողականութեամբ, երբ՝

- Ստեղծագործողները կը խամրին
- Մանկավարժները կը նօսրանան
- Ազգային գործիչները կը շահագործուին
- Մամուլի ծառայողները կ'անգօսնուին
- Կազմակերպութիւնները կը տժգունին
- Արուեստագետները կը լուսանցքուին

Սխա՞լ են այս մատնանշումներն ու վերագրումները:

Հակառակը փաստող *որեւէ* տրամաբանական գործօններ հազիւ թէ գտնուին:

Ինչո՞ւ այս բացարձակախօսութիւնը եւ բարձրախօսութիւնը:

Շա՛տ պարզ:

- Հայ ստեղծագործական միտքը կը քաջալերուի՞:
- Հայ մանկավարժը կը գնահատուի՞:

- Հայ ազգային գործիչը կը վարձատրուի՞:
- Հայ մամուլի ծառայողը կը պատրաստուի՞:
- Հայ կազմակերպութիւնը կը վերանորոգուի՞:
- Հայ արուեստագետը կ'արժեւորուի՞:

Այս բոլորի փոխարէն, գիտէ՞ք ինչեր կ'արձանագրուին.

- Միջակութիւններ (կը դեգերին)
- Հաճոյախօսներ (կը շրջագային)
- Անցողիկներ (կը նշմարուին)
- Արկածախնդիրներ (կը գործեն)
- Պատեհապաշտներ (կը պարզուին)
- Ցեցեր (կը յայտնուին)

Ասկէ վերջ, ո՞ր պետք է փնտռել մարդուժը, մտաւորական թէ գործող մարդուժը, որ հայ իրականութեան պիտի տայ ապրելու ու վերապրելու, գործելու ու վերագործելու, արդիւնաւորելու եւ վերարդիւնաւորելու վերելք մը:

Ներկայ դրութեամբ, մտայնութեամբ ու հոգեբանութեամբ, վստահ պետք է ըլլայ, յոյժ դժուար է, որովհետեւ՝

- Գրողները ո՞ր պիտի արժեւորուին
- Մանկավարժները ո՞ր պիտի հիմնաւորուին
- Ազգային գործիչները ո՞ր պիտի գործեն
- Մամուլի ծառայողները ո՞ր պիտի ձեւաւորուին
- Կազմակերպութիւնները ո՞ր պիտի վերականգնին
- Արուեստագետները ո՞ր պիտի արտադրեն

Հարցադրումներ ու մտահոգութիւններ, ճիչեր եւ տազնապներ, մարդուժի պոռչտուք, աղաղակ, բայց, վերջին հաշուով, ո՞ր է եւ ի՞նչ է լուծումը, երբ արտերկրի հայագաղութները սկսած են (վաղո՞ւց արդէն) տառապիլ աւանդականութեան (ան)աւանդականութենէն:

Բայց ովքե՞ր են այս անկումայնութեան պատճառ եղողները, եթէ ոչ՝

- Ստեղծագործական մարզը անտեսողները
- Ուսուցչական ասպարեզը ստորագնահատողները
- Ազգային գործը արհամարհողները
- Մամուլի դաշտը փետրաթափողները
- Կազմակերպութիւնները ամայացնողները
- Արուեստագիտական աշխարհը թերագնահատողները

Իսկ այս բոլորին պատասխանատունե՞րը.

Ամէն ոք թող փնտռէ իր շրջապատի, միջավայրին ու գաղութի ԱՆՀԵՌԱՏԵՍ

(ան)պատասխանատուներու ԱՆՀԱՆԴՈՒՐԺԵԼԻ (ան)պատասխանատուներու մօտ,
որովհետեւ՝

Մարդու ճիւղը մասին գեղգեղումներ շատ կան, բայց կարելի՞ է գործող սովորամոլութեամբ
մարդու ճիւղը պատրաստել եւ անոր վստահիլ մարդու ճիւղին հայկականութիւն:

Ո՛վ որ այլահնարք ունի, ինդրե՛մ, թող իր տարբերակը ներկայացնէ, սկսած...:

**ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ՝ ԻՐ ԱՆԽԱԽՏ ՎՃՌԱԿԱՍՈՒԹԵԱՄԲ
ԷՐՏՈՂԱՆԸ՝ ԻՐ ԱՌԱՋԳԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ**

2010 թ. 7 «Ինքն» թիւ

Երտողանը եկաւ ու գնաց:

Փոթորկեց ու փոթորկեցուց:

Տանգապեց ու տագնապեցուց:

Թերեւս ալ լաւ եղաւ իր գալը, որովհետեւ վերանորոգուեցաւ մեր պահանջատիրական
ոգին, վերահաստատուեցաւ մեր վճռականութիւնը, մանաւանդ ի տես հայ
երիտասարդութեան ու նոր սերունդին կորովի մասնակցութեան:

Ասիկա կը նշանակէ թէ՛ պահանջատիրութեան ջահի անմարտութիւնը կը բոցկլտայ ու կը
բոցավառէ նոր սերունդին խռովայոյժ հոգիները, թուրքին յիշեցնելով *անմոռանալին*,
թուրքին զգացնելով *անժամանցելին*:

Երտողաններ որքան ալ ինքզինքնին ձեւացնեն հաւկոյր կամ խուլ, միեւնոյնն է, չեն կրնար
շրջանցել իրականութիւնը, ա՛յն անմեռ իրականութիւնը, որ կու գայ իրենց պապերէն ու
կը խրի իրենց խռռչը, ծոցը, կողը:

Պուրճի հրապարակին վրայ, Նահատակաց յուշարձանին դիմաց պարզուած տեսարանը
այդ էր, ա՛յդ կը ցուցանէ, իսկ Երտողան չէր կրնար չլսել այդ բողոքաձայնը, որքան ալ
զբաղած ըլլար իր բեմադրական ճառախօսութիւններով ու ցուցադրական
դերակատարութիւններով:

Վստահբար, Երտողան Պէյրութ եկաւ, ոչ միայն պետական, գործարարական ու
տնտեսական համաձայնագիրեր ստորագրելու, այլեւ մարտահրաւեր կարդալու
լիբանանահայութեան, թէ ինք Լիբանանի, Պաղեստինի եւ Իրաքի արաբ ժողովուրդի
կողքին է, անոնց դատապաշտպանի դրօշակակիրն է, վկայ՝ զինք պետականօրէն ու
ժողովրդայնօրէն ընդունելու տեսարանները, հետեւաբար, լիբանանահայութեան բոլոր

Ճեւի հակազդեցութիւնները կը մնան անցողակի, հուսկ՝ անհետեւանք:

Սակայն, Էրտողան կը սխալի (սխալեցա՛ւ), պարզապէս անոր համար, որ լիբանանցիներու *ամողջ, արդարամիտ եւ իրատես* հատուածները գիտեն զանազանել քաղաքական լարախաղացութիւնները, դիւանագիտական երկդիմութիւններն ու միջպետական խաբուսիկութիւնները, մանաւանդ երբ անոնց հեղինակներն են ցեղասպանութեամբ գերյագեցած, բռնագրաւումներով գերճանչցուած ու ծաւալողականութեամբ գերգինովցած պետութիւններ:

Այո՛, մենք չենք խօսիր լիբանանցի այն հատուածներուն մասին, որոնք ինչ-ինչ նպատակներէ մեկնած, գովքը կը հիւսեն Էրտողաններու ու Թուրքիոյ, արդեօ՞ք մոռնալով որ օսմանցիները իշխելով Լիբանանի վրայ, ինչպիսի՛ սպանդներ սարքած են այդ ժողովուրդին դէմ, որոնց վերջինը՝ 6 Մայիսի Պուրճի հրապարակին վրայ, ազատատենչ մարտիկներու կախաղան բարձրացումով:

Ի դէպ, Լիբանանի ապահովական կամ ներքին գործոց նախարարութեան ուժերու պատասխանատուները, երբ շատ լաւ գիտէին թէ լիբանանահայութիւնը այդ այցելութեան դէմ պիտի բողոքէ, *փափկանկատութիւնը* պետք է ունենային Նահատակաց հրապարակին վրայ չգետեղելու Էրտողանի բարձրադիր դիմապաստառը, չգրգռելու համար հայ երիտասարդութիւնը:

Այնքան ատեն որ այդ գիտակցութիւնը չունեցան, տարուած ենք մտածելու, թէ ասիկա «անմեղ» տնօրինում մը չէր, այլապէս կարելի էր սուսիկ-փուսիկ զայն վար առնել, խուսափելու համար որեւէ պատահարէ:

Վերջին հաշուով, չէ՞ որ լիբանանահայութիւնը լիբանանեան քաղաքացիութիւն ունի, հետեւապէս, իր իրաւունքները, իր արժանապատուութիւնը պարտաւոր էին յարգել պատկան կողմերը, յատկապէս երբ հարցը կը վերաբերի *ուրացուող, մերժուող ու նենգափոխուող* ցեղասպանութեան:

Ինչ կը վերաբերի ոմանց այն վերագրումներուն ու դիտարկումներուն, թէ Էրտողան կը ներկայացնէ պետութիւն ու համապետական մակարդակով այցելութիւն մըն է եղածը, ո՞վ ըսաւ թէ լիբանանահայութիւնը գիտակից կամ ըմբռնող չէ այդ իրողութեան, բայց Նոյնքան եւ անելի վիրաւորուած է, իբրեւ լիբանանցի, իբրեւ լիբանանահայ, որ Էրտողան ցեղասպանութեան ու կախաղահանութեան *ժառանգորդ* մը ըլլալով, առնուազն ներողութիւն մը պիտի խնդրէր լիբանանցիներէն, ծաղկեպսակ մը զետեղէր Նահատակներուն ի յիշատակ, փոխանակ պոռոտախօսութեան ու սիրաշահութեան դասեր տալու ասոր եւ անոր:

Իսկ Էրտողանի դիմապաստառին վար առնելու դէմ ճամարտակախօսներուն պետք է յիշեցնել, 2005էն ետք, Նոյն հրապարակին վրայ Լիբանանի Հանրապետութեան նախագահին դէմ արձակուած այլանդակութիւններն ու յիշոցները, նախագահ մը, որ

պաշտօնապէս ընտրուած էր ու իր պաշտօնաշրջանը երկարած գումարած՝
սահմանադրական եւ օրէնսդրական հիմունքներով:

Անկախաբար այս բոլորէն, սակայն միշտ նոյն ծիրին մէջ, ի լուր Թուրքիոյ նախագահ Ապտալլահ Կիլի Դեկտեմբերի կէսերուն Պէյրութ (հաւանական) ժամանումին, որ իր նախորդին բնական շարունակութիւնն է, նոյն քարոզական բովանդակութեամբ եւ, անխուսափելիօրէն, լիբանանահայութեան դէմ նոր վեմ բարձրացնելու դիտաւորութեամբ, անհրաժեշտ է *համապատասխան կազմակերպուածութեամբ ծառանալ այս այցելութեան դէմ*:

Սակայն, այս անգամ (մի գուցէ այլ առիթներով եւս), պետք է *աւանդական* գործելաձեւերէն դուրս գալ, այսինքն՝ հայկական ելոյթները սահմանափակել ՄԷԿ բանախօսով, համալրացումով ոչ-հայ դէմքերու, ինչպէս ասորի ու քիւրտ համայնքներէն, որոնք նոյնպէս պահանջատեր են եւ, անպայմանօրէն, լիբանանցի քաղաքագետ, պատմագետ, ցեղասպանագետ անուանի հեղինակութենէ մը:

Բաց աստի, համադրուած ու ներդաշնակուած կարգով, հայ թէ արաբ մտաւորականներու կողմէ, օգտագործուին լատենտողական, ձայնասփիւռային ու մամլոյ լայնածիր կարելիութիւնները, ցոյց տալու ցեղասպանութեան ոճրարարքին *ամբողջական* թղթածրարը, նաեւ ծանօթացնելու անոր ներքին եւ արտաքին ծալքերը, տիրող ու ծաւալուող շրջանային ու միջազգային քաղաքական հոլովոյթներու լոյսին տակ, մերկացնելով այսօրուան Թուրքիոյ ռազմաքաղաքականութեան վարքագիծը:

Կրնայ արդարացուիլ, թէ նախապէս նման բազմաթիւ միջոցառումներ կատարուած են, ճիշդ է, սակայն, *այսօր քաղաքական պայմանները բոլորովին նոր թափ եւ ուղղութիւն ստացած են*, իսկ ատոնցմէ ամենէն աւելի Թուրքիան է որ կ'ուզէ օգտուիլ (եւ կ'օգտուի), ինքզինք ջահակիրը դարձնելով մերթ իսլամականութեան, մերթ աշխարհիկութեան (դէպի Եւրոպական Միութիւն... սուրալով), մերթ պաղեստինեան դատի ջերմեռանդ պաշտպան, մերթ լիբանանեան կայունութեան ջատագով, մերթ շրջանի առաջնորդող պետութիւն, մերթ սիւննիական անմրցակից գերիզօրութիւն:

Այս բոլորը, սակայն... առանց իր յարաբերութիւնները խզելու արաբներու թշնամի Իսրայէլի հետ, առանց ջնջելու ռազմական համաձայնագիրը անոր հետ, բայց, լիբանանեան հողամասէն, Պրն. Էրտողանը, սպառնական մատնահարումներ կատարելով Իսրայէլի դէմ, միայն փոշի ցանելու եւ աժան ժողովրդականութիւն շահելու մարտավարութեամբ:

Էրտողանը եկաւ իր առածգական ռազմաքաղաքականութիւնը վերաշարունակելու:

Լիբանանահայութիւնը՝ իր *անխախտ* վճռակամութիւնը վերահիմնաւորելու:

Առաջինին անհեթեթութիւնը պետք է մերկացնել, իսկ երկրորդին անվիճելիութիւնը՝ *վերահաստատել*:

